

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սովորողների սննդի կազմակերպման համար հատկացված տարածքի վարձակալության մրցույթ անցկացնելու վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշման 2-րդ հավելվածի և ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 3-րդ հավելվածի 125-րդ կետի պահանջներով՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Ս. Քոչարյանցի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հայտարարում է Կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Դեմիրճյան 32 հասցեում գտնվող անշարժ գույքում սովորողների սննդի կազմակերպման համար նախատեսված 29,4 մ² ընդհանուր մակերեսով ոչ բնակելի տարածքի (այսուհետ՝ Տարածք) վարձակալության մրցույթ:

Տարածքի ամսական վարձավճարի շուկայական արժեքը կազմում է 27000 (քսանյոթ հազար) ՀՀ դրամ:

Կազմակերպությունում սովորողների սննդի կազմակերպման համար տարածքը վարձակալության տրամադրման դեպքում՝ վարձակալական վճարի մեծության նկատմամբ կիրառվում է գեղջ՝ տարածքի շուկայական գնահատված արժեքի 50%-ի չափով:

Մրցույթի մասնակցելու ցանկություն ունեցող անձինք կարող են Կազմակերպությանը առձեռն կամ փոստային ծառայության միջոցով հայտ ներկայացնել մինչև 2021 թվականի նոյեմբերի 23-ը, աշխատանքային օրերին՝ ժամը 10:00-ից 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Փոստային ծառայության միջոցով հայտի ներկայացումը համարվում է պատշաճ ներկայացված, եթե այն Կազմակերպության կողմից ստացվել է մինչև 2021 թվականի նոյեմբերի 23-ը:

Մրցույթին մասնակցելու հայտին անհրաժեշտ է կցել հետևյալ փաստաթղթերը.

1) **Ֆիզիկական անձի դեպքում**՝ անձը հաստատող փաստաթղթի պատճեն, անհատ ձեռնարկատեր հանդիսանալու վերաբերյալ պետական գրանցման վկայականի պատճեն, տեղեկատվություն սննդի ոլորտում գործունեություն ծավալելու վերաբերյալ:

2) **Իրավաբանական անձի դեպքում**՝ պետական գրանցման վկայականի պատճեն, կանոնադրության պատճեն, տնօրենի անձը հաստատող փաստաթղթի պատճեն, տեղեկատվություն սննդի ոլորտում գործունեություն ծավալելու վերաբերյալ:

Մրցույթին ներկայանալիս վերոնշյալ փաստաթղթերի հետ անհրաժեշտ է ներկայացնել բնօրինակները, որոնք տեղում Կազմակերպության կողմից պատճենների հետ համեմատվելուց հետո ենթակա են վերադարձման:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի նոյեմբերի 25-ին, ժամը՝ 16:00-ին, Կազմակերպությունում. հասցե՝ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Դեմիրճյան 32: